Գործիքներից՝ երկար կեռ բերաններով քիրգիթը հայերեն կոչվում էր բէյատու։

Երկաթե ծանր թակիչը՝ թրք. նավան, հայերեն կուփիչ[124]։

Երբ գործում են համեմատաբար մանր իրեր՝ խուրջին, մաֆրաշ, բղաքսակ, արդեն սարքված թելերի վրա նրանք դասավորում են մի քանի հատ, միջիմեջ թողնելով տարածություն՝ ղաթ։

Գորգագործությունը շատ մանրակրկիտ, մաշիչ և լարված ուշադրություն պահանջող աշխատանք է։ Զանգեզուրումն էլ պատմվում է այն ավանդությունը, որը լսել է Զեդգենիձեն Շուշում՝

«Աստված մարդ ստեղծելիս՝ նաև սովորեցրել է նրան ամեն տեսակ արհեստ, որ նրան անհրաժեշտ է իր գլուխը պահելու համար, սովորեցրել է աման շինել, փայտ տաշել, պատ քաշել, կար անել, երկաթ հալեցնել... Այս տեսնելով սատանան էլ կամեցել է մի բան սովորեցնել մարդուն, որ իրան էլ միշտ հիշեն, ցույց է տվել իր գործած գորգի գեղեցկությունը, գայթակղեցրել է, տվել է տօրքն և սովորեցրել գորգ գործել։ Ուրիշ ավելի մաշող արհեստ սատանան չէր կարող սովորեցնել»։

Գորգագործն էլ խույս է տալիս, ինչպես, օրինակ, իր անասունի կամ տան անդամների թիվը, իր գործածի ծավալը հայտնելուց։ Մինչև աշխատանքն ավարտելը, նամբարքը չէր ասում։ Նա վախենում էր և ծանդըր վöնդը՝ ոտը ունեցողից և որպեսզի աչքը նի չի կö՝ չկպչի, նա տօրքի ետև կամ մի տեղ, որտեղ մտնողը չէր կարող նկատել, դնում էր ջրի մի կöվարթի՝ գավաթի մեջ ծöի՝ ձու, հավատացած լինելով, որ չար աչքից ծöին պիտի նաքի։

Գորգերն ու կարպէտնէրը փռվում էին տախտերի վրա, գետնին, ծառայում էին որպես վրանների ծածկ, խմորի տաշտի, լավաշի պաշարի, ծըլկատէղի ծածկոց։ Ամեն տուն մտնող օտար մարդուն տանտիկինը զարմացնում էր իր այդ գորգերի ու ծածկոցների նախշերի գեղեցկությամբ։ Պատի մի կողմը, երկու սյուների և պատի միջև շինված տախտակամածի, ծըլկատէղի վրա բարձրանում էր ներքնակների, վերմակների և բարձերի ծալքը՝ ծածկված գորգով կամ կարպէտով, իսկ տախտակամածի տակ նայողի աչքից պահված էին ամանները, մանր-մունր տանու իրերը։ Մի որևէ սյունից կախված էր լինում նախշուն բղաքսակը, որի մեջ աղը չոր էր մնում տան խոնավությունից։ Զանգեզուրում մշակվել է գորգերի նախշերի տեղական տարբերակը, որը չափազանց մոտ է Ղարաբաղում ոճավորվածին։ Գորգերի պես առատ նախշեր ունի կարպէտնէրի մի տեսակը, որը կոչվում է դրուխլու։

ՋՈՒԼՀԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջուլհակ բառը Զանգեզուրում հայտնի չէ անշուշտ այն պատճառով, որ այդ աշխատանքը դեռևս իսկական արհեստ չէր դարձել և դուրս չէր եկել տան չորս պատերի սահմանից։ Նա մնում էր նեղ իմաստով տնայնագործություն և չէր դարձել հատուկ մասնագիտություն, որի արդյունքովն էր վարպետը գլխավորապես ապրում, արտադրելով ոչ թե տան սպառման, այլ շուկայի համար։ Ջուլհակությունն այստեղ կոչված էր առաջին հերթին և գուցե բացառապես տան անմիջական պետքերը բավարարելու։ Նա մրցման չմտավ գործարանա-

124 Տե՛ս անդ։